ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 6, 1957 Общественные науки

Հոկտեմբերյան սոցիալիստական ռևոլյուցիայի 40-ամյակին

Ա. Վարդապետյան

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ 1921—1925 ԹԹ.

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան ազատագրեց ցարական Ռուսաստանի տիրապետության տակ կեղեքվող բոլոր ժողովուրդներին։ Ցարիզմի գաղութային ռեժիմին ենթակա ժողովուրդների բախտը անվերապահորեն կապված էր Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հետ։ Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակից հետո ժողովուրդների միջև եղած կապը էլ ավելի ուժեղացավ։

Ռուսաստանում բանվորների և գյուղացիների իշխանությունը հաստատվելուց հետո Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը ճանաչեցին ճնշված ժողովուրդների անկախության և ինքնորոշման իրավունքը։

«Նվաճելով իշխանությունը, — գրում էր Վ. Ի. Լենինը, — մենք անպայման իսկույն ևեթ կճանաչենք այդ իրավունքը և՛ Ֆինլանդիայի համար, և՛ Ուկրաինայի համար, և՛ Հայաստանի համար, և՛ ցարիզմի (ու վելիկոռուսական բուրժուազիայի) կողմից ճնշված ամեն մի ժողովրդի համար»[1]։

* * *

Ցարիզմի վարած գաղութային դաժան քաղաքականությունը կաշկանդել էր Ռուսաստանի գերիշխանության տակ ապրող ժողովուրդների քաղաքական ու տնտեսական, ինչպես և կուլտուրական զարգացումը, ուստի սովետական կարգերը հաստատվելուց հետո ՌՍՖՍՌ-ն, չնայած իր ծանր տնտեսական դրության, օգնության ձեռք մեկնեց կապիտալիզմի ճիրաններից ազատագրված փոքր ժողովուրդներին՝ նրանց քայքայված տնտեսությունը վերականգնելու համար։

Կոմունիստական պարտիայի 10-րդ համագումարը (1921 թ. մարտ) տնտեսական, քաղաքական և կուլտուրական գործողությունների հաստատուն պլան մշակեց, որի նպատակն էր վերացնել սովետական ժողովուրդների միջև անցյալից մնացած տնտեսական անհավասարությունները։ Այս նպատակի իրագործման համար Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը ամենից առաջ ձեռնամուխ եղան պլանաչափություն մտցնելու տնտեսական կյանքի բոլոր բնագավառներում. ինչպես օրինակ՝ ծայրամասերում՝ «...գործարանները հումքի աղբյուրների մոտ փոխադրելու միջոցով (Թուրքեստան, Բաշկիրիա, Կիրգիզստան, Կովկաս՝ տեքստիլ բրդեղենի, կաշվեղենի արդյունաբերությունը և այլն...»[2]։

ՍՍՌՄ-ի ժողովուրդների միջև եղած տնտեսական անհավասարությունները վերացնելու նպատակով Սովետական կառավարությունը որոշեց երկրի

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 26, էջ 206։
[2] ՍՄԿԿ-ն բանաձևերում ու որոշումներում..., մաս 1, էջ 714, 1954։

արևելյան ծայրամասերը տեղափոխել արդյունաբերական մի շարք կարևոր ձեռնարկություններ։

Հայաստանում բամբակագործությունը զարգացնելու նպատակով 1922 թ. Ռուսաստանի կենտրոնից (Իվանովո-Վոզնեսենսկից) Ալեքսանդրոպոլ (այժմ Լենինական) տեղափոխվեց լավ սարքավորված տեքստիլ ֆաբրիկան։

Եթե ցարական Ռուսաստանը գիտավորյալ կերպով խանգարում էր ազգային փոքրամասնությունների սեփական տնտեսություն և արդյունաբերություն ստեղծելու գործին, ապա Սովետական Ռուսաստանը, ընդհակառակը, բոլոր հնարավոր պայմանները ստեղծեց և բարեկամական օգնություն ցույց տվեց փոքր, նախկինում հետամնաց ժողովուրդներին ունենալու զարգացած արդյունաբերություն, առաջավոր գյուղատնտեսություն և կուլտուրա։

Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեն պարտիական կազմակերպություններին ուղղված կոչում՝ 1920 թ. դեկտեմբերի կեսերին գրում էր.— «Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները, որպես ՌԿԿ բաղադրիչ մաս պետք է ունենան հիմնական մի լոզունգ միայն՝ հավատարիմ մնալ Ռուսաստանի մարտիկներին, ուրիշ ճանապարհ մենք չենք կարող ունենալ... համերաշխ, համառ ու եռանդուն աշխատանքը պետք է փրկի տընտեսապես քայքայված ու արյունաքամ եղած երկիրը»[1]։

Անտարակուսելի է, եթե Սովետական Հայաստանը չստանար ռուս ժողովրդի բազմակողմանի օգնությունը, պատմական կարճ ժամանակամիջոցում հնարավոր չէր լինի երկիրը դուրս բերել ավերվածությունից ու քայքայումից։

1920 թ. դեկտեմբերի կեսերին Վ. Ի. Լենինը, Կրեմլում ընդունելով Հայաստանի Ռևկոմի ներկայացուցիչներին, զրույցի ժամանակ հուսադրում է նրանց և խոստանում օժանդակություն՝ երկրի վերաշինության գործում. «...Սովետական Հայաստանին.— ասում է Վ. Ի. Լենինը,— կօգնենք ամեն կերպ, ինչով կարող ենք կօգնենք»։

Մեծ Լենինի հետ տեսակցելու հաջորդ օրն իսկ Ա. Մռավյանը և Ս. Տեր-Գարրիելյանը ՌՍՖՍՊ Ֆինանսների ժողովրդական կոմիսարիատից Հայաստանի համար ստանում են 2 միլիարդ ռուբլի դրամ, սովետական թղթադրամով, որը ոսկու հաշվով կազմում էր 600 հազար ռուբլի։ Դեկ. 15-ին Ա. Մռավյանը այդ գումարը հասցնում է Երևան։

Ա. Մռավյանը գնում Երևան չհասած ՌՍՖՍՌ-ի Պարենային ժողովրդական կոմիսարիատից հաղորդում են ՀՍՍՌ Ռևկոմին այն ապրանքների և մթերքների մասին, որոնք հատկացվում էին Հայաստանին (28 վագոն հացահատիկ, մանուֆակտուրա, վառելանյութ և այլն)։

...Մոտ օրերս Հայաստանի համար բարձվելու են վագոններ 1,5 միլիոն արշին մանուֆակտուրա, 500 գրոս կարի թել, բժշկական դեղորայք 6 ամսվա համար (1,5 միլիոն բնակչության համար), 700 փութ թուղթ, կարևոր գրականություն։ Հացահատիկը հավանական է կուղարկվի ընկ. Մյասնիկյանի հետ։ Մեծ հույս կա, որ Ուկրաինայից ստանանք 20—25 հազար փութ ձավարա»[2]։

Հայկական ՍՍՌ-ին օգնություն ցույց տալու հարցը 1920 թ. դեկտեմբերի վերջերին մտցվում է ՌԿ(բ)Պ Կենտկոմ, որտեղ ընդունվում է համապատասխան որոշում։

---

[1] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի պարտ. արխիվ, ֆ. 1, դ. 4, թ. 30։

[2] Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 4/114, դ. 10, թ. 70—71։

Ս. Օրջոնիկիձեն, ծանոթ լինելով ՌԿ(բ)Պ Կենտկոմի որոշման հետ՝ Հայաստանին նյութական օգնություն ցույց տալու մասին, 1920 թվականի դեկտեմբերի վերջերին ՀՍՍՌ Ռեկոմի ներկայացուցիչների հետ ունեցած հանդիպման ժամանակ հույս է հայտնում նրանց, որ Սովետական Ռուսաստանը իր ուժն ու եռանդը չի խնայի հայ ժողովրդին օգնելու գործում։

«Թող Հայաստանի բանվորներն ու գյուղացիները իմանան, — ասում է Ս. Օրջոնիկիձեն, — որ Սովետական Ռուսաստանի ամբողջ ուժն ու եռանդը տրամադրված է Սովետական Հայաստանին ծառայելու, որ Ռուսաստանի բանվորներն ու Կարմիր բանակը իրենց հայի խղճուկ պաշարը կբաժանեն Հայաստանի բանվորների և գյուղացիների հետ, գործի անցնք լի եռանդով ու հավատով դեպի սուրբ գործը»[1]։

1921 թ. ապրիլին Վ. Ի. Լենինը ՌՍՖՍՌ Պարենժողկոմի առաջ պահանջ է ներկայացնում Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկաներին շտապ կարգով պարենային ապրանքներ մատակարարելու մասին։ «Վճռական միջոցներ ձեռք առնք, — գրում էր Վ. Ի. Լենինը, — Բաքվին մատակարարելու գործում, միաժամանակ Վրաստանին և Հայաստանին...»[2]։

Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկաները միայն 1921 թ. ՌՍՖՍՌ-ից ստացել են մեկ միլիոն փութ հացահատիկ, որը բաշխվել է հետևյալ կերպ՝ Վրացական ՍՍՌ-ին յուրաքանչյուր ամիսը՝ 50 հազար փութ, Ադրբեջանական ՍՍՌ-ին՝ 50 հազար փութ, Հայկական ՍՍՌ-ին՝ 25 հազար փութ, Անդրերկաթուղուն՝ 50 հազար փութ, Կովկասյան հատուկ բանակին՝ 50 հազար փութ։ Այդ թվականին Ռուսաստանից ստացվել է 6,5 միլիոն ռուբլու (ոսկով) փոխառություն[3]։

1921 թ. գարնանացան և աշնանացան կամպանիաները անցկացնելու համար ՌՍՖՍՌ Հողժողկոմատը բաց է թողնում 100 հազար փութ սերմացու, որը խոշոր օգնություն էր Հայաստանի գյուղացիությանը։ Անդրկովկասի ռեսպուբլիկաներում ժողովրդական տնտեսության զարգացումն ապահովելու և պարենային դրությունը որոշ չափով բարելավելու համար Վ. Ի. Լենինը պահանջում էր միավորել տնտեսական միջոցները, ամբողջ Անդրկովկասի համար ստեղծել մեկ մարզային տնտեսական օրգան, զարկ տալ ապրանքափոխանակությանը արտասահմանի հետ, առաջ մղել ոռոգման աշխատանքները Հայաստանում և Ադրբեջանում։

1921 թ. գարնանից բարելավվում է ապրանքաշրջանառության գործը Պարսկաստանի հետ, որտեղից Հայաստանի համար գնվում է 30 հազար փութ հաց և այլ ապրանքներ, կարգավորվում է ապրանքափոխանակությունը Անդրկովկասի ռեսպուբլիկաների և Ռուսաստանի միջև։

Սովետական իշխանության առաջին տարիներին՝ 1920—1922 թթ. ՌՍՖՍՌ-ի Ժողկոմսովետը Հայաստանին տվել է հսկայական գումարներ, դոտացիաներ, վարկեր և այլն։

ՌՍՖՍՌ-ի Ժողկոմսովետի 1921 թ. ապրիլի 4-ի որոշմամբ Հայաստանին լրացուցիչ բաց է թողնվում 1,125.000.000 ռուբլու վարկ[4]։ Հայաստանը ֆինան-

---

[1] «Կոմունիստ», 9 հունվարի, 1921։
[2] Տե՛ս «Լենինյան ժողովածու», հ. 20, էջ 227։
[3] ՀՍՍՌ ՊԿԱ, ֆ. 4/114, գ. 222, թ. 115։
[4] ՀՌԿՊԱ—ՍՍՌՄ, ֆ. 2281, վ. 2. գ. 2000, թ. 8։

սական ճգնաժամից դուրս բերելու համար 1921 թ. սեպտեմբերի 30-ին, Մոսկվայում, Հայաստանի և Ռուսաստանի միջև կնքվում է ֆինանսական համաձայնություն, որով թույլատրվում է Հայաստանի տերիտորիայի վրա բացելու ՌՍՖՍՌ-ի Պետրանկի մի շարք գրասենյակներ։

Հայաստանը ամուր կապերի մեջ է մտնում Ռուսաստանի և մյուս եղբայրական ռեսպուբլիկաների հետ։ Աշխուժանում է պետական առևտուրը Ռուսաստանի հետ, ընդարձակվում է ապրանքաշրջանառության ծավալը։ Հայաստանը դուրս է գալիս այն մեկուսացած վիճակից, որի մեջ գտնվում էր նախկինում։

Սովետական Ռուսաստանը անկեղծ բարեկամական օգնություն է ցույց տալիս հայ ժողովրդին սովի դժվարին դրությունից դուրս գալու համար։ 1921 թ. փետրվարի վերջերին—1922 թ. սկզբներին Պարենային ժողովրդական կոմիսարիատի տրամադրության տակ է դրվում 300 հազար ռուբլի ոսկի փող արտաքին շուկաներում հաց գնելու համար[1]։

ՌՍՖՍՌ-ի Կենտգործկոմի որոշմամբ բնակչության համար տրվում է մեծ քանակությամբ հաց, պարենային մթերքներ, 100 հազար ռուբլի (ոսկով)[2]։

1921 թ. հոկտեմբերին ՌՍՖՍՌ Պարենժողկոմատը Հայաստանին բաց է թողնում 200 հազար փութ ալյուր, 260 փութ ծխախոտ, 200 դյուժին օճառ, 134 վագոն զանազան տեսակի ապրանքներ[3]։

Հայաստանի կառավարությունը իր սուղ միջոցներից գյուղացիներին է տալիս 350 հազար փութ սերմացու, որի մեծ մասը ստացվում է Ռուսաստանից։

1921 թ. հոկտեմբերի վերջերին Ռուսաստանից ուղարկվում է 2000 փութ շաքար, 150 փութ կակաո, 150 փութ շոկոլադ[4]։

Նույն թվականի դեկտեմբերին Ռուսաստանը բաց է թողնում 5 վագոն գրեչիխա, 1 վագոն վարսակ, իսկ Ուկրաինայի Պարենժողկոմատից տրվում է կարգադիր՝ 3790 փութ շաքարի և 15 վագոն հացահատիկի համար, 700 փութ շաքարը ստացվում է դեկտեմբերի 20-ին, իսկ հացահատիկը՝ հունվարի վերջերին։ 1921 թ. դեկտեմբերի վերջերին Հյուսիսային Կովկասից և Ադրբեջանից Հայաստան է ուղարկվում 39 հազար փութ բրինձ[5]։

1921 թ. մայիսից մինչև նոյեմբերը Սովետական Ռուսաստանը Հայաստանին տվել է՝

1. Ռուսական ոսկե դրամ 1 միլիոն 500 հազար ռուբլի, արծաթե դրամ՝ 100 հազար ռուբլի՝ ոսկով, սովետական թղթադրամ՝ 945 հազար ռուբլի։ Ընդամենը՝ 2 միլիոն 545 հազար ռուբլի՝ ոսկով։

2. Սև վառելանյութ — մազութ՝ 1 միլիոն 65 հազար փութ, 90 հազար փութ նավթ, 12 հազար փութ բենզին, 5 հազար փութ մեքենայի յուղ։

3. Մանուֆակտուրա՝ 1 միլիոն 500 հազար արշին, զինվորական զգեստներ՝ վերարկու, կոշիկ, վերնաշապիկ, վարտիք, գլխարկ, 18 հազար մարդու համար, փոխնորդ՝ 36 հազար զույգ։

---

1 «Խորհրդային Հայաստան» № 51, 5 մարտի, 1922։
2 ՀՌՊԿԱ—ՍՍՌՄ, ֆ. 2281, գ. 2000, թ. 197։
3 «Խորհրդային Հայաստան» № 191, 12 հոկտեմբերի, 1921։
4 ՀՍՍՌ ՊԿԱ, ֆ. 102, գ, 1, թ. 98։
5 ՀՍՍՌ ՊԿԱ, ֆ. 102 գ. 71, թ. 50։

4. Հացահատիկ, այլուր՝ 326 հազար փութ, շաքար՝ 5 հազար փութ, ձուկ՝ 50 հազար փութ, աղ՝ 7 հազար փութ։

5. Անասուն, գլխավորապես ձի՝ 1500 հատ։

6. Ինքնաթիռ՝ 10 հատ, ավտոմեքենա՝ 10 հատ և այլն[1]։

* * *

Հետագա տարիներին խոշոր աշխատանքներ են տարվում դաշնակցական կառավարության ժամանակ հիմնովին քայքայված գյուղատնտեսությունը վերականգնելու գործում։

Սովետական իշխանությունը և Կոմունիստական պարտիան լուրջ միջոցառումներ են մշակում և իրականացնում գյուղատնտեսության զանազան ճյուղերի վերականգնման ուղղությամբ։ Դարերի ընթացքում ընչազուրկ հայ գյուղացին դառնում է հողի լիակատար տերը, հողը առհավետ հանձնվում է նրան առանց որևէ հատուցման։

Հայաստանի աշխատավորները, առաջնորդվելով Վ. Ի. Լենինի հայանի ցուցումներով, եռանդուն աշխատանք են սկսում երկրի ոռոգման սիստեմի ընդարձակման համար։ Հայ ժողովուրդը ձեռնամուխ է լինում ջրանցքների վերանորոգման ու կառուցման աշխատանքներին, տյդ գործում ստանալով Ռուսաստանից նյութական խոշոր օգնություն։

Հայաստանի տնտեսության համար կարևոր նշանակություն ուներ այգեգործությունը և բամբակագործությունը, որոնց զարգացման համար ՌՍՖՍՌ-ը տալիս է 620 հազար ռուբլի (ոսկով)։

Բամբակագործության զարգացմանը խոշոր չափով նպաստում է ՌՍՖՍՌ-ի Բամբակկոմի և ՀՍՍՌ Ժողկոմսովետի՝ 1923 թ. հունվարի 18-ին կնքած պայմանագիրը։ Այդ պայմանագրի համաձայն ընկերության պահեստային կապիտալը կազմում էր՝ 500 հազար ռուբլի (ոսկով)[2]։

Ռեսպուբլիկայում բամբակի ցանքի կամպանիան հաջող կերպով անցկացնելու և բամբակագործությամբ զբաղվող գյուղացիներին նյութական օգնություն ցույց տալու համար Անդրֆեդերացիայի կառավարությունը բաց է թողնում 100 հազար ռուբլի՝ վարկ ոսկով[3]։

Բամբակագործության զարգացման բնագավառում բեկումն սկսվում է 1923 թվականից, երբ կազմակերպվում է ռուս-հայկական պետական բամբակագործական ընկերությունը (ԴՐԱԽՏԸ)։

ԴՐԱԽՏ-ի ֆունկցիաների մեջ էին մտնում բամբակի առևտրի կազմակերպման գործը, ինչպես նաև Ռուսաստանի և Հայաստանի տեքստիլ արդյունաբերության բամբակի հումք մատակարարելու աշխատանքը։

Վերականգնման տարիներին զգալի չափով ընդարձակվում են ցանքային տարածությունները, ավելանում է հացահատիկային կուլտուրաների բերքատվությունը, աճում է գյուղատնտեսության ընդհանուր բերքատվությունը, բարելավվում է գյուղացիների նյութական վիճակը։

Գյուղատնտեսության կարիքների համար անհրաժեշտ գյուղատնտեսա-

---

[1] ՀՍՍՌ ՊԿԱ, ֆ. 4/114, գ. 184, թ. 71։
[2] ՀՍՍՌ ՊԿԱ, ֆ. 113, գ. 146, թ. 32։
[3] ՀՌՊԿԱ—ՍՍՌՄ, ֆ. 2281, վ. 2, էջ 2000, թ. 172։

կան գործիքներ և մեքենաներ ձեռք բերելու համար ՌՍՖՍՌ-ը մինչև 1924 թ. ՀՍՍՌ-ին բաց է թողել 10 միլիոն ռուբլու վարկ[1]։

Գյուղատնտեսության զարգացման բազայի վրա հնարավորություններ է ստեղծվում սկսելու նաև արդյունաբերության վերականգնման աշխատանքները։

Սովետական իշխանությունը դաշնակցական կառավարությունից ժառանգել էր արդյունաբերական մի քանի փոքր ձեռնարկություններ, որոնք գտնվում էին բարձիթողի վիճակում։

Ամբողջապես քայքայված վիճակի մեջ էին գտնվում Ալավերդու պղնձաձուլական գործարանը, Լոռիի հանքերը, որոնք ամբողջովին կորցրել էին իրենց նշանակությունը և երկրին տալիս էին աննշան քանակությամբ արտադրանք։

ՌՍՖՍՌ-ի կողմից ցույց տրվող մշտական օգնության և երկրի տնտեսական կյանքի աշխուժացման շնորհիվ որոշ բարենպաստ պայմաններ են ստեղծվում արդյունաբերության կարևոր ճյուղերի վերականգնման համար։

Կաշվի, պոլիգրաֆ արդյունաբերության, մանվածքա-գործվածքային արտադրության և գինու-կոնյակի արդյունաբերության զարգացման համար Սովետական Ռուսաստանը տալիս է տեխնիկական սարքավորումներ, մեքենաներ և ֆինանսական միջոցներ։

Իվանովո-Վոզնեսենսկու բանվորների կողմից 1922 թ. որպես նվեր ուղարկված տեքստիլ ֆաբրիկան դարձավ ՀՍՍՌ արդյունաբերության առաջնեկներից մեկը։

Հայաստանի տնտեսության համար տեքստիլ գործարանը կատարյալ նորություն էր։ Սկզբնական շրջանում գործարանը հիմնվում է 456 գործվածքային դազգահներով և 18000 իլիկ ունեցող մասերով։ Գործարանի ընդարձակման և արտադրանքի բարձրացման համար Ռուսաստանը 1924 թ. նվիրում է ևս 12 հազար իլիկ և 400 դազգահ։

1925 թ. մայիսի 1-ից սկսում է աշխատել նաև գործարանի մանվածքային մասը՝ 2170 իլիկով։ Նույն թվականի հոկտեմբերին աշխատանքի է անցնում նաև գործվածքային մասը, 30 գործարաններով։

Լենինականի տեքստիլ արդյունաբերության հետագա վերելքի համար 1925 թ. ՌՍՖՍՌ-ը բաց է թողնում 860 հազար ռուբլի[2]։

Կաշվի արդյունաբերության զարգացման համար ՌՍՖՍՌ-ի Ժողկոմսովետը 1923 թ. տալիս է 120 հազար ռուբլի։ Մինչև 1925 թ. Ռուսաստանի կողմից այդ նպատակով տրվող գումարը հասնում է 600 հազար ռուբլու։

Վերականգնման տարիներին ՀՍՍՌ կաշվի արդյունաբերությունը զգալի չափով ընդարձակում է իր արտադրանքի ծավալը։

Միանգամայն քայքայված վիճակի մեջ էր գտնվում պոլիգրաֆ արդյունաբերությունը։ Հայաստանի կառավարությունը հատուկ ուշադրություն է դարձնում պոլիգրաֆ արդյունաբերության ստեղծման գործին, որը կարևոր նշանակություն ուներ ռեսպուբլիկայում կուլտուրայի զարգացման համար։

1922—1923 թթ. թթ. Սովետական Ռուսաստանից ստացվում են վիմագրական, գծագրական, կազմարարական, ցինկոգրաֆիական մեքենաներ և ձուլարան։

---

[1] «Խորհրդային Հայաստան», № 203, 1924, 5 սեպտեմբերի։
[2] ՀՍՍՌ ՊԿԱ, ֆ. 113, գ. 942, թ. 136։

Հայկական ՍՍՌ կառավարության հոգատարության և ՌՍՖՍՌ-ի կողմից ցույց տրվող օժանդակության շնորհիվ կարճ ժամանակամիջոցում բարելավվում են տպագրական աշխատանքները, ավելանում է տպագրական տիրաժը; որը խոշոր նշանակություն ուներ կուլտուրական կյանքի հետագա առաջընթացի համար։

Հայաստանի տնտեսության մեջ խոշոր նշանակություն ուներ Երևանի մեխանիկական գործարանը։ Այդ գործարանը ստաքի կանգնեց Ռուսաստանից որպես նվեր ուղարկված 12 վագոն մեքենաների և այլ սարքավորումների շնորհիվ[1]։ Ռուսաստանից ստացված մեքենաները տեղադրելու համար Բաքվից օգնության են գալիս որակյալ բանվորներ։

Նոր կառուցվող մեխանիկական գործարանի սարքավորումը մեկ ձուլարանով և 30-ից ավել դազգահներով որպես նվեր ստացվում է ՌՍՖՍՌ ժողտնտխորհից։ Գործարանի համար նոր շենք կառուցելու և սարքավորում ձեռք բերելու համար ՌՍՖՍՌ-ը լրացուցիչ բաց է թողնում 250 հազար ռուբլի։

Լենինգրադի բանվորները 1924 թ. որպես նվեր գործարանին տալիս են 32 մեսագահատ հասատց, որոնք տեղադրում են ռուս մեխանիկներ՝ Վ. Ս. Ֆյոդորովը և Ա. Ս. Էյուբանովը։ Այդ նույն թվականին օգնության կարգով Ռուսաստանը գործարանին տալիս է 110 հազար ռուբլի[2]։

Վերականգնման տարիներին Հայաստանում առաջացան արդյունաբերական նոր ճյուղեր։ Կարբիդ կալցիի արդյունաբերությունը զարգացնելու համար Ռուսաստանը բաց է թողնում 40 հազար ռուբլի, իսկ ծխախոտի ֆաբրիկայի ընդարձակման համար՝ 15 հազար ռուբլի (օգնության կարգով)։

Սովետական Ռուսաստանը խոշոր օգնություն ցուցաբերեց նաև ռևսպուբլիկայի ժողովրդական տնտեսության էլեկտրիֆիկացման գործին։

Վերականգնման տարիներին Սովետական Ռուսաստանը Ալավերդու և Ղափանի հանքերի ու գործարանների համար բաց է թողել 2 միլիոն ռուբլի, որից 1 միլիոնը ավել է անվերադարձ։ Այդ գումարից 560 հազար ռուբլին հատկացվել է Զանգեզուրի հանքերի վերականգնման աշխատանքներին։

Սովետական Ռուսաստանի մշտական օգնության, Հայաստանի աշխատավորների անձնուրաց աշխատանքի շնորհիվ Հայաստանը դարձավ ՍՍՌՄ-ի դունավոր մետալուրգիայի կարևոր կենտրոններից մեկը։

Ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը խոշոր ուշադրություն դարձրին ռևսպուբլիկայի կուլտուրական մակարդակի բարձրացման վրա։

Սովետական կառավարությունը կուլտուրական շինարարության գործը համարեց սոցիալիստական տնտեսության անրաժանելի սեկտորներից մեկը։

Հայ ժողովուրդը կուլտուրական շինարարության բնագավառում հաղթահարեց խոշոր դժվարություններ ու խոչընդոտներ։

Երկրի էկոնոմիկայի մեջ տեղի ունեցող ատաիճանական փոփոխությունները, գյուղատնտեսության և արդյունաբերության բնագավառում ձեռք բերված հաջողությունները խոշոր չափով նպաստեցին կուլտուրական կյանքի զարգացման գործին։

1921—1925 թթ. ՌՍՖՍՌ-ի Լուսավորության ժողովրդական կոմիսարիատը խոշոր օգնություն ցույց տվեց Հայաստանի Լուսավորության ժողովրդական

[1] Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 115, գ. 942, թ. 136։
[2] ՀՍՍՌ ՊԿԱ, ֆ. 115, 963, թ. 18։

կոմիսարիատին՝ դպրոցաշինարարությունը, ժողովրդական կրթությունը, կուլտուրան նոր աստիճանի բարձրացնելու համար։

Սովետական Ռուսաստանը օժանդակեց Հայկական ՍՍՌ-ին՝ դպրոցների, տեխնիկումների, հանրային գրադարանի, թանգարանի, բազմաթիվ բարձրագույն ուսումնական հաստատությունների և կուլտուրական տյլ հիմնարկ-ձեռնարկների բացման ու սարքավորման գործին։

Այդ տարիներին ՌՍՖՍՌ-ը Հայաստանին տվել է գրենական պիտույքներ, հսկայական չափի գրականություն, թանգարանային էքսպոնատներ, թուղթ և այլն։

Վերականգնման տարիներին հարյուրավոր հայ երիտասարդներ մեկնում են սովորելու Ռուսաստանի զանազան քաղաքները։

Սովետական իշխանությունը բոլոր պայմաններն է ստեղծում հայ ժողովրդի կուլտուրայի զարգացման և հետագա բարգավաճման համար։ ՌՍՖՍՌ-ը վերականգնման տարիներին հսկայական օգնություն է ցույց տալիս նաև Հայաստանի Առողջապահական ժողովրդական կոմիսարիատի աշխատանքներին։ ՌՍՖՍՌ-ի Առժողկոմատի օգնությամբ Երևանում կազմակերպվում է Սանիտարա-համաճարակային բաժին, որի աշխատանքները կարգավորելու նպատակով Մոսկվայից ուղարկվում են մեծ քանակությամբ դեղորայք, վիրակապային նյութեր, մահճակալներ, սպիտակեղեն և այլն։ Տարածված համաճարակային հիվանդությունները վերացնելու համար Երևան են գործուղվում բազմաթիվ բժիշկներ, բժշկական միջին աշխատողներ։ Նրանց օգնությամբ 1923 թ. Երևանում հիմնվում է Տրոպիկական ինստիտուտը, 1924 թ. Մոսկվայից որպես նվեր Երևան են ուղարկվում ռենտգենյան ապարատ և այլ բժշկական իրեր։

Ահա այսպիսի բազմակողմանի, անշահախնդիր եղբայրական օգնություն է ցույց տվել ռուս մեծ ժողովուրդը հայ ժողովրդին ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին։

Այսպիսով, եթե ամփոփելու լինենք, թե ի՞նչքան դրամական գումարներ է ստացել Հայաստանը Ռուսաստանից 1921—1925 թթ., կստացվի մոտավորապես հետևյալ պատկերը. գյուղատնտեսության վերականգնման համար՝ 59 միլիոն ռուբլի, տրանսպորտի համար՝ 13 միլիոն ռուբլի, էլեկտրիֆիկացիայի համար՝ 22 միլիոն ռուբլի, ընակարանային շինարարությանը՝ 28 միլիոն ռուբլի, ճարտարվեստին՝ 24 միլիոն ռուբլի, հասարակական շինարարությանը՝ 10 միլիոն ռուբլի, փոստ-հեռագրական շինարարությանը 1 միլիոն ռուբլի, կատավարության ծախսերի համար՝ 11 միլիոն ռուբլի։

* * *

Սովետական Միության բազմազգ ժողովուրդների եղբայրական կազմում, հայ ժողովուրդը սոցիալիստական շինարարության տարիներին ռուս մեծ ժողովրդի և սովետական մյուս ժողովուրդների եղբայրական աջակցությունը ստանալով, նրանց հետ ակտիվ մասնակցություն է ունենում մեր երկրում սոցիալիզմի կառուցման գործին։

---

[1] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի պարտ. արխիվ, ֆ. 49, գ. 60, թ. 34։